

Ընդ սմին մատուցաք երկրպագութիւն եւ տէրունական գահին Սրբոյն Յովնայ, որ է գահ քրիստոսագիր՝ ցանկալի աղանց համայնից եւ պարծանք արամեան ազգիս եւ լուսաւորչածին զարմիս. աւանդեցեալ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ՝ եղբօր իւրոյ ըստ մարմնոյ՝ Սրբոյն եւ Արդարոյն Յակոբայ՝ նախկին եպիսկոպոսին այնր Եթողոյ՝ Որ կայ վե-

“Արդ զայս ըսելով, եղբարք, ամենեցուն մեր միտք ճշմարիտ գիտելով ընթանան առ ազգն տեսական, ի զաւակն արդարոց, յերկիրն պարգեւաց, յանձկալի քաղաքն Երուսաղէմ, ի հրաշակերտ տաճարն Աստուծոյ. ուր օրէնքն աստուածատուրք եւ մարգարէքն հոգեկիրք, արդարք շնորհալիցք, հարքն կատարեալք եւ որդիք խրատեալք, ուր նշանք երկնայինք եւ արուեստք երկրայինք. ուր յայանութիւնք հրեշտակաց եւ ընդունելութիւն պատարագաց ի ձեռն կենդանի Հոգւոյն Սրբոյ, որով Աստուած ծանալի ճշմարտապէս այնոցիկ՝ որոց ոգիքն սրբութեամբ համեմատեալ են ընդ Աստուծոյ:

“Արդ վասն այսր ամենայնի յոյժ սիրեմ զաշխարհն, եւ յաշխարհի անդ զգաւառն, եւ ի գաւառի անդ զքաղաքն ընտրեալ, եւ ի քաղաքին զբարձրացեալ տեղին Գողգոթա, եւ ի տեղւոջ անդ զեւս բարձրացեալ վեճն, եւ ի վերայ վիսին զաշխարհաձեւ խաչն, եւ ի վերայ խաչին զլաշէցեալն, որ կայր առաջի երկնաւոր տեսողացն, եւ եր գեր ի վերոյ ոչ միայն քան զբարձրութիւնս լերանց, այլ եւ քան զերկինս. նա եւս քան զերկինս երկնից բարձրացեալ. 7 (Մատենագրութիւնք նախնեաց. Եղիշէ. Վենետիկ 1859. էջ 274):

1 Ս. Յակոբ Առաքեալ, ծանօթ Տեառն Եղբայր եւ Արքայ տիտղոսներով, Առաջին Եպիսկոպոսն է Երուսաղէմի (30—60): Յակոբ Տեառն եղբայր նահատակուեցաւ Երուսաղէմի մէջ եւ թաղուեցաւ իր կալուածին մէջ, Սիոնի բարձունքը: Տեառն եղբօր Կենդանութեան ատեն (42), Յովհաննէս Աւետարանի եղբայրը, Յակոբոս Զերեթեան գլխաւորուեցաւ եւ (Ասկից կոչուեցաւ Գլխաւոր Ս. Յակոբ) Տեառն եղբայրը իր կալուածին մէջ թաղել տուաւ Գլխաւորը:

Չորրորդ դարուն սկիզբը երկու Յակոբներուն վրայ շինուեցաւ վանք մը Հայոց սեփական, Սրբոյն Յովնայն աշունով: Իրուսաղէմի ամենէն հիանալի գիրքին, Սիոնի վրայ,